ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/104

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Բ. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 26.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2021թ. թիվ 26/26-1/6057-2021 գրությամբ «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.04.2021թ. թիվ 01/24.2/936-2021 գրության հիման վրա 21.04.2021թ. թիվ 26/26-1/6057-2021 գրությամբ նախաձեռնել է «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն մասնակցել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցմանը՝ ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը:

2021թ. ապրիլի 7-ին ստացել ենք «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N 4 արձանագրությունը, որով հանձնաժողովը «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ից պահանջել է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

Նշվածի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ.

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 59-րդ կետի 2-րդ մասի՝ բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել.

Այնուամենայնիվ գրությամբ դիմել ենք «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի տնօրենին և «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրելով հստակեցնել «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ից պահանջվող փաստաթղթերի կազմը:

Նշված գրությանը պատասխան չենք ստացել, ավելին «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2021թ որոշում է կայացրել մեր ներկայացրած հայտը համարել անբավարար, իսկ մրցույթը չկայացած՝ արձանագրություն N5:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարին ուղղված գրության մեջ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի տնօրենը նշել է, որ «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն չունի «Ապրանքային բորսաների մասին» օրենքով սահմանված կարգով հրապարակային

սակարկություններ կազմակերպելու համապատասխան լիցենզիա:

Հարկ եմ համարում նշել, որ.

1. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները, նման լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ նախատեսված չէ, ավելին, գոյություն չունի (չի կարող գոյություն ունենալ) նաև լիցենզավորող մարմին, իսկ բորսայական առևտրի իրականացման մասով նախկինում տրված լիցենզիաները «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո չունեն իրավական ուժ:

2. Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ Եթե նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթ կարող է կատարվել միայն այդ նորմատիվ իրավական ակտով նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է նորմատիվ իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա նորմատիվ իրավական ակտի այդ դրույթը գործում է համապատասխան նորմատիվ իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

«Ապրանքային բորսաների մասին» օրենքի 23-րդ հոդվածով սահմանված է, որ լիցենզիա տալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: ՀՀ կառավարության որոշմամբ նման կարգը սահմանված չէ, ուստի լիցենզիայի պահանջը չի կարող գործել, ավելին, նույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանվում է, որ Բորսային առևտուրը կազմակերպվում է լիցենզիայի առկայության դեպքում, որը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պետական լիազորված մարմնի կողմից, որը ներկայումս գոյություն չունի:

Եվս մեկ կարևոր փաստ.

ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 2019-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 1232-Ն որոշմամբ՝ հիմքում ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է.

1. Իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում՝

1) իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնի որոշմամբ, եթե՝

ա) դադարել է իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունների հետագա իրավական կարգավորման անհրաժեշտությունը,

բ) իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում կամ կարգավորվելու են այլ իրավական ակտով,

գ) ուժի մեջ է մտել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ, որին հակասում են այդ իրավական ակտի դրույթները,

դ) ուժի մեջ է մտել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր, որի նորմերին հակասում է այդ իրավական ակտը,

ե) ժամկետային իրավական ակտի համար նախատեսված ժամկետը լրացել է.

Խնդրում եմ նշված փաստարկները հաշվի առնել որոշում ընդունելիս»:

«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/104 ընթացակարգի շրջանակներում 27.04.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.04.2021թ. թիվ 01/24.2/936-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2021 թվականի մարտի 16-ին աճուրդային եղանակով վաճառքի կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից)՝ իր կողմից ներկայացրած հայտով հավաստել է, որ բավարարում է հրավերով սահմանված բոլոր պահանջներին, սակայն, հետագայում պարզվել է, որ Մասնակիցը «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հրապարակային սակարկություններ կազմակերպելու համար չունի համապատասխան լիցենզիա, ուստի ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 40-րդ կետի համաձայն, Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է

անբավարար և մերժվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Որոշման 45-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, Մասնակցի կողմից ներկայացված հայտի և Ընկերության կողմից կատարված հարցման ու դրա պատասխանի լուսապատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/104 ընթացակարգի շրջանակներում 27.04.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/104 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/104 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2) «Ֆինանսական չափորոշիչ».

2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

2.6 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.7 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն:

4. «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը և Հավելված 2-ը ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությանը տրամադրվել էր մեկ աշխատանքային օր ժամկետ՝ ներկայացնելու «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից դրանք չեն տրամադրվել և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2021թ. թիվ 26/26-1/6057-2021 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 15.04.2021թ. թիվ 01/24.2/936-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2) «Ֆինանսական չափորոշիչ».

2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

2.6 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.7 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն:

«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը և Հավելված 2-ը ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությանը տրամադրվել էր մեկ աշխատանքային օր ժամկետ՝ ներկայացնելու «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից դրանք չեն տրամադրվել և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը կիրառելի է այն դեպքում, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների

նկատմամբ, սակայն Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և դրանք Ընթացակարգի հրավերի հետ համադրելու արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերը կազմվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, հետևաբար հարկ եմ համարում արձանագրել, որ այս դեպքում Կարգի 41-րդ կետի հիմքով Ընկերությանը «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթեր ներկայացնելու պահանջը իրավաչափ չէ, քանի որ ի սկզբանե, ինչպես արդեն որոշմամբ արձանագրվել է, Ընթացակարգի հրավերով նման պահանջ, այն է՝ «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնելու վերաբերյալ հավաստող փաստաթղթեր ներկայացնելը, չի սահմանվել:

Ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2021թ. թիվ 26/26-1/6057-2021 գրությամբ «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**